ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արփինե Ավագյան՝ ԿԳՄՍ նախարարության «Վայոց ձորի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. Գործուղման վայրը և ժամկետները

Լեհաստանի Հանրապետություն, քաղաք Չեխանովեց, 2026 թվականի հունիսի 19-26-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը

Չեխանովեցի համայնքապետարան, Չեխանովեցի հանրային գրադարան և գործընկեր մշակութային հաստատություններ:

4.Գործուղման նպատակը

Գործուղման նպատակն էր Եղեգնաձոր համայնքի պատվիրակության կազմում մասնակցել Լեհաստանի Հանրապետությունում իրականացվող հայ-լեհական համագործակցության ծրագրերին, ուսումնասիրել Չեխանովեց համայնքի հանրային գրադարանի և կրթական և մշակութային հաստատությունների աշխատանքային փորձը, իրականացնել փորձի փոխանակում, զարգացնել միջազգային համագործակցություն և քննարկել հետագա կրթամշակութային ծրագրերի իրականացման հնարավորություններ:

5. Քննարկված թեմաները

- Հանրային գրադարանների դերը համայնքային կրթական և մշակութային կյանքում,
- Գրադարանների կողմից իրականացվող կրթական, մշակութային և երիտասարդական ծրագրերը,
- Երեխաների և երիտասարդների ներգրավումը մշակութային նախաձեռնություններում,
- Հայ-լեհական մշակութային կապերի ամրապնդման հնարավորությունները,
- Փորձի փոխանակման, մասնագիտական համագործակցության և փոխայցելությունների կազմակերպման ձևաչափերը,
- Համատեղ կրթամշակութային ծրագրերի մշակման և իրականացման հեռանկարները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Չեխանովեց համայնքի ղեկավարության, հանրային գրադարանի աշխատակիցների, մշակութային հաստատությունների ներկայացուցիչների, ինչպես նաև Լեհաստանում Հայաստանի Հանրապետության հյուպատոսության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանի հետ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել է «Վայոց ձորի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի գործունեությունը, իրականացվող ծրագրերը և համայնքային գրադարանային աշխատանքի փորձը:

Քննարկվել են հայ-լեհական համագործակցության զարգացման, մշակութային կապերի ամրապնդման, գրադարանների միջև փորձի փոխանակման, փոխայցելությունների կազմակերպման և երեխաների, երիտասարդների ու ոլորտի մասնագետների մասնակցությամբ համատեղ կրթամշակութային ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Մասնակցություն է ցուցաբերվել «Բարեկամության կամուրջներ՝ լեհ-հայկական երեխաների և երիտասարդների ճամբարներ» ծրագրի շրջանակներում իրականացվող կրթական, մշակութային, ճանաչողական և ինտեգրացիոն միջոցառումներին:

7. Հանդիպումների արդյունքում ընդունված որոշումները և ստորագրված փաստաթղթերը

Գործուղման ընթացքում երկու համայնքների միջև ստորագրվել է համաձայնության հուշագիր, որով կողմերը վերահաստատել են համագործակցության և գործընկերության զարգացման պատրաստակամությունը՝ հատկապես կրթամշակութային, համայնքային զարգացման և փորձի փոխանակման ոլորտներում:

Հուշագրով նախատեսվում է՝

- փոխադարձ այցելությունների կազմակերպում,
- կրթամշակութային համատեղ ծրագրերի իրականացում,
- համայնքային կառույցների միջև փորձի փոխանակում,
- երկարաժամկետ համագործակցության ամրապնդում:

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ նախատեսվում է աշնանը փոխայցելություն՝ Չեխանովեցի պատվիրակության այց Վայք համայնք՝ համագործակցության հետագա խորացման նպատակով:

Բացի այդ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ շարունակելու համագործակցությունը Չեխանովեց համայնքի, հանրային գրադարանի և մշակութային կառույցների հետ:

Հատուկ կարևորությամբ ընդգծվել է Լեհաստանում Հայաստանի Հանրապետության հյուպատոսության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանի աջակցությունն ու համագործակցությունը՝ ծրագրի արդյունավետ իրականացման և կողմերի միջև կապերի ամրապնդման գործում:

8. Առաջարկությունները

Առաջարկվել է շարունակել և զարգացնել հայ-լեհական կրթամշակութային համագործակցությունը՝

• կազմակերպելով գրադարանային և մշակութային ոլորտի մասնագետների փոխայցելություններ,

• իրականացնելով երեխաների և երիտասարդների մասնակցությամբ համատեղ ծրագրեր,

• կազմակերպելով մշակութային ժառանգության, ավանդույթների և ազգային արժեքների ներկայացման նախաձեռնություններ,

• մշակել առցանց և առկա համագործակցության նոր ձևաչափեր:

Պատասխանատու կողմեր՝ «Վայոց ձորի մարզային գրադարան» ՊՈԱԿ, Եղեգնաձոր համայնք, Վայք համայնք և լեհ գործընկեր կառույցներ:

Ակնկալվող արդյունք՝ միջազգային համագործակցության զարգացում, գրադարանային և մշակութային փորձի փոխանակում, հայ-լեհական կապերի ամրապնդում և երկարաժամկետ գործընկերային ծրագրերի ձևավորում: